ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. հունվարի 30-ին կայացրած նիստի

Նիստի մասնակիցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Ռինդ և Քարագլուխ գյուղերի բնակիչներ Հուսիկ Սահակյանի և Ծովակ Մովսիսյանի դիմումը ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ պետպատվերի շրջանակներում մասնագիտացված հաստատությունում հետազոտվելու ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Ելնելով բժշկական ցուցումներից և նրանց ընտանիքի սոցիալապես անապահով վիճակից Ռինդ գյուղի բնակիչ Հուսիկ Սահակյանի և Քարագլուխ գյուղի բնակիչ Ծովակ Մովսիսյանի որդու՝ Էրիկ Մովսիսյանի բուժումը պետական պատվերի շրջանակներում իրականացնելու համար նախապատրաստել ՀՀ Վայոց ձորի մարզպետի /թիվ 3 և թիվ 4/ միջնորդագրերն ուղղված ՀՀ առողջապահության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ Հ.Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան